ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնք,
ք.Իջևան, Երևանյան 6, Հեռ. (0263)42138, ijevancity@mail.ru

N 539
04 հուլիս 2019թ.

„ԽԱՉՄԻՇՇԻՆ„ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՄԻՇԱ ՀԱՄԶՅԱՆԻՆ

ՀԻջևանի համայնքապետարանի / այսուհետ՝ Պատվիրատու/ և „Խաչմիշշին„ ՍՊԸ – ի / այսուհետ՝ Կապալառու/ միջև 02.05.2019թ. կնքված թիվ ՀՀ ՏՄԻՔ – ԳՀԱՇՁԲ – 19/01 ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանձնի փողոցի զբոսագու վերակառուցման աշխատանքների գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետը պայմանագրի 1.3 կետով սահմանված է 28.06.2019թ.:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին , օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 352 հոդվածի համաձայն եթե պարտավորությունը նախատեսում է ...դրա օրը ...ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը:

Նույն օրենսգրքի 408 հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ / կետանցով/ կատարելը: Նույն օրեսգրքի 409 հոդվածի համաձայն պարտավորությունը խախտած պարտապանը պարտավոր է հատուցել պարտատիրոջը պատճառած վնասները:

Կողմերի միջև կնքված պայմանագրի 3.1.2 կետի համաձայն Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի .

Կապալառուից պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 կետի համաձայն միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու պատճառված վնասները:

3.4.6. կետի համաձայն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքով պայմանագրի լուծման դեպքում հատուցել պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3 – րդ կետի համաձայն պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում , երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը

համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված: Հաշվի առնելով այն հանգամանքը , որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները Իջևանի համայնքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով միակողմանի հրաժարվում է ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից համապատասխանաբար այն համարելով լուծված և պատշաճ ծանուցումս ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված ,, Գնումների գործընթացի կազմակերպման մասին,, կարգի 33 –րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Կողմերի միջև կնքված պայմանագրի.

5.1 կետի համաձայն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6199200 / վեց միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ -ն:

6.2 կետի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համարԿապալառուից գանձվում է տույժ՝ կատարման ենթակա սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 % չափով:

6.3 կետի համաձայն 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուժանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5% չափով:

6.4 կետի համաձայն 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

Կատ. Համայնքի ղեկավարի իրավական հարցերով խորհրդական՝ Ս. Սիրադեղյան